

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

24 մարտ 2018

6-րդ դասարան, տևողությունը՝ 120ր


Աշակերտի անուն, ազգանուն՝ _____

Դպրոց՝ _____

1. Օգտագործելով միայն 20 և 50 դրամանոցներ քանի՞ եղանակով է հնարավոր վճարել 3280 դրամ:

Պատասխան՝ 33

2. Հայտնի է, որ ABCD ուղղանկյան կեսը գտնվում է EFGH քառակուսու ներսում, իսկ EFGH քառակուսու $\frac{1}{5}$ -րդ մասն է գտնվում ABCD ուղղանկյան ներսում: Գտնել, թե ABCD ուղղանկյան երկարությունը լայնությունից քանի՞ անգամ է մեծ:



Պատասխան՝ 10

3. Դպրոցի շախմատի թիմը բաղկացած է 2 տղաներից և 4 աղջիկներից: Լուսանկարիչը աշակերտներին հանձնարարում է նստել մի շարքով այնպես, որ երկու ծայրերում նստած լինեն տղաները, իսկ նրանց միջև լինեն աղջիկները: Քանի՞ եղանակով են կարող երեխաները նստել, որպեսզի բավարարեն լուսանկարչի հանձնարարությունը:

Պատասխան՝ 48

4. Քանի՞ եղանակով է հնարավոր հետևյալ աղյուսակում կարդալ Արշակ բառը, եթե ամեն տառ կարդալուց հետո թույլատրվում է կարդալ միայն նրա հետ ընդհանուր կողմ ունեցող վանդակի տառ:

Կ	Ա	Շ	Ա	Կ
Ա	Շ	Բ	Շ	Ա
Շ	Բ	Ա	Բ	Շ
Ա	Շ	Բ	Շ	Ա
Կ	Ա	Շ	Ա	Կ

Պատասխան՝ 24

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

24 մարտ 2018


6-րդ դասարան, տևողությունը՝ 120ր

5. Ֆիզկուլտուրայի դահլիճում կան բասկետբոլի, վոլեյբոլի և ֆուտբոլի գնդակներ: Հայտնի է, որ բացի 14 հատից՝ մնացած բոլոր գնդակները ֆուտբոլի գնդակներ են, բացի 17 հատից մնացած բոլորը վոլեյբոլի գնդակներ են և բացի 19 հատից մնացած բոլորը բասկետբոլի գնդակներ են: Քանի՞ գնդակ կա ֆիզկուլտուրայի դահլիճում:

Պատասխան՝ 25

6. Մեկ գրամ ներկով հնարավոր է ներկել 40սմ^2 մակերես: Քանի՞ գրամ ներկ է անհրաժեշտ 1մ հաստությամբ և 5մ, 10մ, 12մ չափերով սպիտակ պատկերն ամբողջությամբ ներկելու համար:

Պատասխան՝ 120 000



7. Արմենն ունի զեղչի կտրոն, որը խանութի դրամարկղում ցույց տալով վճարում է 20%-ով պակաս: Նա հեռուստացույցով լսեց, որ մարտի 24-ին խանութի բոլոր ապրանքները վաճառվում են 50% զեղչով, իսկ մարտի 25-ին՝ 30% զեղչով: Նա մարտի 24-ին գնաց խանութ և կատարեց գնումներ՝ զեղչի շնորհիվ վճարելով ընդհանուր առմամբ 25000 դրամ: Որքա՞ն գումար նա կծախսեր, եթե գնար խանութ մարտի 25-ին և կատարեր նույն գնումները՝ կրկին օգտագործելով զեղչի կտրոնը:

Պատասխան՝ 35 000

8. Քանի՞ ուղղանկյուն է պատկերված նկարում:

Պատասխան՝ 47

